

ՄԻՋԱՋՎԱՅԻՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՀԱՅ-ԱՊՐԲԵԶԱՍԱԿԱՆ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ
ԱՌԵՎՏՐԱՏՈՒՆՆԵՐԻ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԻՑ (1923-1927 թթ.)

ԳՐԻԳՈՐ ԲԱԼԱՍԱՆՅԱՆ

ՀԽՍՀ իշխանությունները Աղրբեջանի պետական և կոռպերատիվ քազմաթիվ ձեռնարկությունների հետ աշխատանքային լայն կապեր ունեին, որոնք ձևավորվել էին դեռևս 1921-1922 թթ.: Դրանք մեծապես նպաստեցին Խորհրդային Հայաստանի տնտեսության զարգացմանը: Այս համագործակցությունը ապահովում էր Աղրբեջանից դեպի Հայաստան նավթի անխափան առաքումը, որի փոխարեն Հայաստանից արտահանվում էին հանքաքար և այլ ապրանքներ¹: Այս թեմային մասամբ անդրադարձել ենք: Թեմային իրենց աշխատություններում անդրադարձել են նաև Վ. Ղազախեցյանը², ինչպես նաև Յ. Գրաբսկին³: Վ. Ղազախեցյանը անդրադարձել է բոլշևիկների կողմից իրականացվող նոր տնտեսական քաղաքականությանը՝ ներին, քանի որ այդ քաղաքականությունը թույլ տվեց զարգացնել նաև արտաքին առևտուրը, իսկ Յ. Գրաբսկին խոսում է Անդրֆեդերացիայի շրջանակներում Անդրկովկասում իրականացվող արտաքին առևտորի մասին՝ անդրադարձ կատարելով նաև 1927 թ. Անդրկովկասի արտաքին առևտորի ժողկոմատի՛ ԽՍՀՄ արտաքին առևտորի անդրկովկասայան լիազորության վերածվելու փաստին:

Խորհրդային Հայաստանի իշխանությունները մոռացության չտվեցին արտաքին առևտուրատնտեսական առնչություններ հաստատելու այն հարուստ փորձը, որը կուտակվել էր մինչև ԽՍՀՄ անդամ դառնալը, և 1923 թ. սկսած ակտիվ գործունեություն ծավալեցին երկրի սոցիալ-տնտեսական վիճակի բարելավման համար՝ քաջ գիտակցելով, որ այդ գործում մեծ դեր կարող է խաղալ նաև արտաքին առևտուրը: Այդ հարաբերությունները պայմանականորեն կարելի է բաժանել երկու մասի: Առաջին կեսին՝ 1923-1925 թթ., հայկական կողմը քայլեր էր կատարում գյուղատնտեսության զարգացման համար. որպես ապրանքափոխանակության հիմք ընդունվել էր բամբակը: Իսկ երկրորդ կեսին՝ 1925-1927 թթ., հարաբերությունները ադրբեջանցիների հետ միտքած էին երկրի արդյունաբերության զարգացմանը, և ապրանքափոխանակության ու առևտորի հիմնական միջոց էին նավթն ու նավթամթերքները:

¹ Այս մասին տես՝ Գ. Ա. Բալասանյան, Խորհրդային հանրապետությունների հետ ՀՍԽՀ առևտուրատնտեսական առնչությունների պատմությունից 1921-1922 թթ., «Հայոց պատմության հիմնահարցեր», № 10, Եր., 2009:

² Տես՝ Վ. Ն. Ղազախեցյան, Հայաստանը 1920-1940 թթ., Եր., 2006:

³ Տես՝ Յ. Յ. Գրաբսկի, Անդրկովկասի արտաքին առևտուրական կապերի զարգացումը Անդրֆեդերացիայի ժամանակ (1922-1936 թթ.), «Լրաբեր հասարակական գիտությունների», № 9, Եր., 1968:

1923 թ. պետական-կոռուպքերատիվ առևտուի գծով ՀՍԽՀ-ում ձեռք էին բերվել զգալի հաջողություններ, որոնք հետագա տարիներին ավելի ծավալվեցին և ամրապնդվեցին: Այդ ժամանակ Խորհրդային Հայաստանում ամբողջ մանրածախ առևտուրը միավորված էր 1922 թ. սեպտեմբերին ստեղծված Հայպետառի (1923 թ. փետրվարի 10-ին այն վերանվանվեց Հայա) համակարգում: Այն իր բաժանմունքներն ուներ հանրապետության տարրեր գավառներում, ինչպես նաև հարևան խորհրդային հանրապետություններում⁴:

Հայառ, ինչպես խորհրդային և ոչ խորհրդային մի շարք այլ հանրապետություններում, ակտիվ գործունեություն էր ծավալել նաև Աղրբեջանական ԽՍՀ-ում: Դեռևս 1921 թ. փետրվարից ՀՍԽՀ-ն Նախիջևանում ուներ տնտեսական ներկայացուցչություն: Անդրկովկասյան հանրապետությունների՝ 1922 թ. դեկտեմբերին ԽՍՀՄ անդամ դառնալուց հետո՝ 1923 թ. հունվարից, Հայառը սկսում է ակտիվ գործունեություն ծավալել Նախիջևանում:

Չնայած իշխանությունների կողմից ձեռնարկված ակտիվ քայլերին՝ 1923 թ. հունվարին Հայաստանում տնտեսական վիճակը շարունակում էր մնալ ծանր: Հայաստանում զգացվում էր հացահատիկի, առաջին անհրաժեշտության ապրանքների, ինչպես նաև կանխիկ դրամական միջոցների կարիք: Այս հանգամանքը ստիպում էր ՀՍԽՀ իշխանություններին դիմելու խիստ քայլերի՝ երկրում առկա դրամական սակավ միջոցների նպատակային օգտագործման համար: Բացի դրանից, փորձում էին աշխուժացնել ապրանքափոխանակությունը Հայաստանի սահմանակից երկրների հետ:

Շարուրի բաժանմունքը գործուն աշխատանք էր տանում Նախիջևանում՝ բամբակ ձեռք բերելու համար: Ենշտ է, Հայաստանի բեթև արդյունաբերությունը դեռ նոր էր զարգանում, բայց և այնպես կարիք էր զգում բանբակի ներմուծման, սակայն պարզ էր, որ ՀՍԽՀ բեթև արդյունաբերությունը ի վիճակի չէր սպառելու ներմուծվող բանբակի ողջ խմբաքանակը: Բամբակի գլխավոր սպառող էր ՌԽՖՍՀ-ն, և Հայաստանի իշխանությունները բամբակը փոխանակում էին Ռուսաստանում:

Բամբակից բացի, Հայառի Շարուրի բաժանմունքը ակտիվ աշխատանք էր տանում նաև Նախիջևանից աղ ձեռք բերելու համար:

1923 թ. հունվարի 27-ին Հայպետառի տնօրենը նամակ է ուղարկում Շարուրում Հայպետառի ներկայացուցիչ Հաջի Հախունդովին՝ հայտնելով, որ իրենց մոտ եղած ապրանքները պետք է վաճառեն կամ կանխիկ դրամով, կամ փոխանակեն բանբակի հետ: Նամակում խնդրվում էր խնայել դրամական միջոցները, ըստ այդմ՝ հրահանգվում էր բաժանմունքի աշխատակիցներին աննպատակ գործուղումների չուղարկել, իսկ խիստ անհրաժեշտության դեպքում դա անել միայն Հայպետառի վարչության թույլտվությամբ, ինչպես նաև կատարել մանրամասն թղթավարություն: Հայտնվում էր, որ Հայպետառի վարչության հասցեով ուղարկվել է մեկ վագոն կերոսին, որը Շարուրում պետք է փոխանակվի բամբակի հետ: Նամակում Հայտնդովին խնդրում էին հավաքել և պահեստավորել Շարուրում եղած բանբակի ողջ խմբաքանակը, քանի որ մոտ ժամանակներում վարչությա-

⁴ Տե՛ս Ա. Մ. Հակոբյան, Սովետական Հայաստանը ժողովրդական տնտեսության վերականգնման շրջանում (1921-1925 թթ.), Եր., 1955, էջ 263:

նը պետք էր լինելու երեք վագոն բամբակ⁵:

1923 թ. մարտի 13-ին Նախիջևանի բաժանմունքի լիազոր Օհանջանյանի և Նախիջևանի «Դրուժբա» ընկերության ղեկավար Վարդանովի միջև պայմանագիր է ստորագրվում, հանաձայն որի՝ ընկերությունը պարտավորվում էր Հայաստանին վաճառել 60.000 փութ⁶ աղ, սակայն ոչ թե միանգամից, այլ ամսական 20.000 փութ⁷:

Բամբակի գնումից զատ Հայառը քայլեր էր ձեռնարկում Շարուրում սեփական ցանքատարածություններ հիմնելու ուղղությամբ, ինչը հաջողությամբ իրականացնելու դեպքում մեծապես կազրեր նաև տեղում բամբակի ինքնարժեքի վրա:

Ապրիլի 14-ին Հայառի առևտորի բաժանմունքի ղեկավար Մելիքը Տեր-Սահակյանին հայտնում է, որ իրենց կողմից բաժանմունքին ուղարկվել է 800 փութ բամբակի սերմ⁸:

Ապրիլի 17-ին Հայառի տնօրենը հեռագրում է Նախիջևանի բաժանմունքի ղեկավար Տեր-Սահակյանին, որտեղ այլ հարցերի շարքում խոսվում է նաև բամբակի մասին: «Սեզ այդ հարցը շատ է հետաքրքրում»⁹, - նշված է հեռագրի վերջում:

Երկու օր անց՝ ապրիլի 19-ին, նույն հասցեով Հայառի տնօրենի կողմից դարձյալ հեռագիր է ուղարկվում, որտեղ նշվում էր, որ Հայառը ներկայացուցությանը կարող է հատկացնել 200 փութ շաքար՝ մեկ փութը 12 ռ. 20 կոպ., և 10 փութ թեյ՝ 1 փութը 120 ռ.: Հեռագրում պահանջվում է իրենց մոտ եղած ողջ բամբակը առանց հետաձգելու ուղարկել՝ հավելելով, որ անհրաժեշտ է բաժանմունքում գտնվող ողջ կերոսինը վաճառել և դրանով մարել վերցրած բամբակի գումարը¹⁰:

Ապրիլի 21-ին Հայառի առևտորի բաժնի ղեկավարը հեռագրում է Տեր-Սահակյանին և հայտնում, որ Հայառը բաժանմունքին փոխանցել է 1493 ռ. 30 կոպ.՝ բամբակի նոր խմբաքանակ փեռք բերելու համար: Հեռագրում խնդրվում էր նաև Հայառի Ալեքսանդրապոլի բաժանմունքին ուղարկել իրենց մոտ եղած մեկ վագոն բրինձը¹¹:

Նախիջևանի բաժանմունքից զատ Հայառի վարչությունն էր քայլեր ձեռնարկում Նախիջևանում այլոց միջոցով բամբակ ձեռք բերելու ուղղությամբ: 1923 թ. ապրիլի 30-ին Հայառի կառավարիչ-տնօրենի տեղակալ Անուշավան Տեր-Առաքելյանը Նախիջևանի բնակիչներ Սաղիխովի և Եղյանցի հետ պայմանագիր է ստորագրում նրանցից բամբակ գնելու վերաբերյալ:

Շուտով բաժանմունքի ղեկավարությունը փոխվում է: Միգուցե դա պայմանավորված էր այն հանգամանքով, որ Հայառի վարչությունը բաժանմունքի գործունեությունը ոչ արդյունավետ էր հանարում, կամ գուցե այլ պատճառով (արխիվային փաստաթղթերի ուսումնասիրության ժամա-

⁵ Տես ՀԱԱ, ֆ. 554, գ. 1, գ. 31, թ. 32:

⁶ 1 փութը = 16 կգ:

⁷ Տես նույն տեղը, գ. 42, թ. 17:

⁸ Տես նույն տեղը, գ. 31, թ. 134:

⁹ Նույն տեղում, թ. 135:

¹⁰ Տես նույն տեղը, թ. 137:

¹¹ Տես նույն տեղը, թ. 142:

նակ պարզել չհաջողվեց):

1923 թ. հունիսին Տեր-Սահակյանին փոխարիմում է Երեմ Տեր-Խաչատրյանը: Հունիսի 7-ին Հայառի առևտորի բաժնի ղեկավարը նրան է ուղարկում պարտականությունների այն ցանկը, որոնց Տեր-Խաչատրյանը պետք է հետևեր իր գործունեությունն իրականացնելիս: Նրան հանձնարարվում էր Շարուր հասմելուն պես ընդունել բաժանմունքը, շրջել ողջ շրջանում, պարզել Հայառին պատկանող բամբակի ցանքերի ընդհանուր քանակը, կազմել այն գյուղացիների ցուցակը, որոնց բաժանված են սերմերը: Պահանջվում էր բաժանմունքի ընդունումն ավարտել Շարուր հասմելուն պես՝ երեք օրվա ընթացքում՝ տեղյակ պահելով առևտորի բաժնին¹²:

Ինչ-ինչ պատճառներով Երեմ Տեր-Խաչատրյանը չի կարողանում կատարել այդ հանձնարարությունը, և Հայառի առևտորային բաժնի ղեկավար Մելիքը ստիպված ինքն է մեկնում Շարուր՝ տեղում իրավիճակին ծանոթանալու համար: Հունիսի 13-ին Մելիքը գրություն է ուղարկում Հայառի վարչություն, որտեղ հայտնում է, որ հունիսի 10-ին մեկնել է Շարուր, շրջել Հայառին պատկանող բոլոր ցանքատարածություններով, որոնք տեղաբաշխված են 34 գյուղերում: Նրա խոսքերով, Հայառի կողմից գյուղացիներին բաժանված 1800 փութ բամբակի սերմից չի ծել 206 փութը: Նման իրավիճակ է նաև Աղբրամբակում և մյուս վարչություններում: Դա պայմանավորված էր դաշտերի՝ չորս-հինգ տարի վարած չլինելով: Այդ պատճառով Մելիքը հրահանգել է կանխավճարի երկրորդ կեսը չվճարել այն տնտեսություններին, որոնցում առկա է նման բարձիթողի վիճակ¹³:

Նույն ամսին Հայառի վարչությունը քայլեր է ձեռնարկում Նախիջևանի բամբակի մաքրման գործարանը վարձով Վերցնելու համար: Առևտորի բաժնի ղեկավարը նամակ է ուղարկում Շարուրի բաժանմունքի ղեկավարին և նշում, որ անհրաժեշտ է՝ վերջինս մեկնի Նախիջևան և բանակցություններ սկսի տեղի գործկոմի հետ՝ Կուրքով եղբայրներին պատկանող բամբակի մաքրման գործարանը վարձով վերցնելու համար: Նամակում պահանջվում էր պայմանագրի ստորագրման նախապայման դմել գործարանը երկարաժամկետ վարձով տրամադրելը, բացի դրանից՝ անհրաժեշտ էր բանակցությունների ժամանակ հասնել այն բանին, որ գործարանի վերանորոգման ողջ գումարը մտցվեր վարձավճարի մեջ: Պահանջվում էր նաև կազմել գործարանի ամենակարևոր հատվածների վերանորոգման նախահաշիվը՝ քաջ գիտակցելով, որ տվյալ պահին Հայառը խուսափում է արտադրություն կազմակերպելուց: Նամակում հիշեցվում էր, որ Հայառը իր ունեցած ողջ գումարը ներդրել էր հումքի ձեռքբերման և գնումներ կատարելու նպատակով, այդ պատճառով պետք չէր մտածել խոշոր ծախսերի մասին:

Նամակի երկրորդ մասում խոսվում էր կերոսինի վաճառքի մասին. նշվում էր, որ տվյալ պահին դեպի Պարսկաստան կերոսինի արտահանումը խիստ դժվար է, այդ իսկ պատճառով անհրաժեշտ էր աշխատել կերոսինը ապրանքափոխանակության միջոցով իրացնել Նախիջևանում¹⁴:

¹² Տե՛ս նույն տեղը, գ. 31, թ. 168:

¹³ Տե՛ս նույն տեղը, գ. 52, թ. 266:

¹⁴ Տե՛ս նույն տեղը, գ. 31, թ. 216:

Թե ինչպես Հայառի Շարուրի բաժանմունքի ղեկավարը կատարեց Հայառի վարչության այս հրահանգը, արխիվային փաստաթղթերն ուսումնասիրելիս պարզել չհաջողվեց:

Բամբակի լվացման գործարանների խնդրին հունիսի 13-ին Հայառի վարչությանը հղած իր նամակում անդրադառնում է նաև Մելիքը: Նա նշում է, որ ինքը տեղում ծանոթացել է այդ խնդրին, և ընտրվել է Եղիազարյանցին պատկանող գործարանը, որովհետև այն հագեցած է բոլոր անհրաժեշտ սարքավորումներով, և նորոգելու համար անհրաժեշտ է ընդամենը 300 ռուբլի, որը հետո նոցվելու է Վարձավճարի մեջ: Քանի որ Շարուրում բոլոր գործարանները Նախիջևանի գործկոմի ենթակայության էին, Մելիքը խնդրում է Հայառի վարչությանը գործարանը Վարձակալելու վերաբերյալ բանակցություններ սկսել գործկոմի հետ, հակառակ դեպքում առանց գործարանի Հայառը ի վիճակի չի լինի հավաքելու անհրաժեշտ քանակությամբ բամբակ¹⁵:

Արխիվային փաստաթղթերն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ, այնուամենայնիվ, Հայառի վարչությունը դժգոհ էր Նախիջևանի մասնաճյուղի գործունեությունից և մտադիր էր լուծարել այն: Մասնաճյուղի ղեկավար Օհանջանյանը, որին հանձնարարված էր անձանք իրականացնել այդ գործընթացը, հոգու խորքում համամիտ չլինելով Վարչության որոշման հետ, քայլեր է ձեռնարկում մասնաճյուղը լուծարումից փրկելու համար:

Նա 1923 թ. հունիսի 27-ին Նախիջևանի մասնաճյուղի դրության և հեռանկարների մասին գեկույց է ուղարկում Հայառի վարչություն: Զեկույցում նշվում է, որ թեև բաժանմունքի անգործության և վնասով աշխատելու պատճառով դրվել է Վերջինիս լուծարման հարցը, սակայն առևտրային գործառույթների աշխուժացման դեպքում այն Հայառի մյուս բաժանմունքներից ոչ վատ կարող է աշխատել: Ըստ Օհանջանյանի՝ բացվում է դեպի Զանգեզուր տանող ճանապարհը: Զանգեզուրի բնակչությունը սկսել է հաց և աղ գնել Նախիջևանից: ճիշտ է, զանգեզուրցի գյուղացին կանխիկ դրամ չունի, սակայն հացի և այլ ապրանքների դիմաց նրանք տալիս են խոշոր եղչերավոր անասուններ: Սա նշանակում է, որ Նախիջևանը Զանգեզուրի համար կարող էր հացահատիկ և այլ ապրանքներ ձեռք բերելու բազա դառնալ: Այդ պատճառով Օհանջանյանը առաջարկում է հետաձգել բաժանմունքի լուծարման հարցի քննարկումը և բանակցություններ սկսել Զանգեզուրի գործկոմի տնտեսական մարմինների հետ, քանի որ հնարավոր է ապահովել ապրանքափոխանակություն: Օհանջանյանն առաջարկում է նաև Զանգեզուրի գործկոմի հետ առևտուր կատարելու համար մթերել մինչև վեց վագոն հացահատիկ, մինչև տասնիհնգ վագոն աղ, մեկ վագոն շաքար և մանուֆակտուրա¹⁶:

Փաստորեն, սրանով Օհանջանյանն առաջարկում էր Զանգեզուրից ստացված ապրանքները վաճառել Նախիջևանում և ստացված գումարով հոգալ բաժանմունքի ծախսերը: Չի կարելի միանշանակ պնդել, թե առաջարկը վարչության կողմից ընդունվել է, սակայն արխիվային փաստա-

¹⁵ Տե՛ս նոյն տեղը, գ. 52, թ. 266:

¹⁶ Տե՛ս նոյն տեղը, թ. 279թ (շրջերես):

թղթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ բաժանմունքը հումիս ամսից հետո էլ հաջողությանք իրականացնում էր իր գործառույթները:

Այսպես, օգոստոսի 25-ին Ադրբեյջանի արդյունաբերության և առևտորի ժողկոնատի կազմում գտնվող աղի վարչության Նախիջևանի բաժանմունքի ղեկավար Դադաշևի և Յայառի վարչության լիազոր Մելիքի միջև աղ գնելու պայմանագիր է ստորագրվում: Այն բաղկացած էր յոթ կետից: Առաջին կետի համաձայն՝ Նախիջևանի բաժանմունքը Յայառին ապահիկ կարգով վաճառում է 20.000 փութ խոշոր աղ՝ 1 փութը 60 կոպեկ: Աղի նշված խմբաքանակը անմիջապես փոխանցվում էր Նախիջևանի բաժանմունքի կողմից (կետ 2): Յայառը պարտավորվում էր գումարը վճարել մեկ ամսվա ընթացքում: 3.000 ռ. վճարվելու էր սեպտեմբերի 5-ին, 3.000 ռ.-ն՝ սեպտեմբերի 15-ին, իսկ մնացած 6.000 ռ.-ն՝ աղի ամբողջ խմբաքանակը ստանալուց հետո (կետ 3)¹⁷:

Երեք օր հետո՝ օգոստոսի 28-ին, նույն քաղաքի բնակիչ Զամբար Ալիկը և Յայառի Նախիջևանի բաժանմունքը Նախիջևանում պայմանագիր են ստորագրում այն մասին, որ նա Յայառին վաճառում է 50 փութ բանբակ՝ 1 փութը 6 ռ. 50 կոպեկ: Բամբակի ամբողջ խմբաքանակը Ալիկը պարտավորվում էր տրամադրել մինչև նոյեմբերի 1-ը¹⁸:

Յայառը մինչև տարվա վերջ շարունակում է իր արդյունավետ գործունեությունը՝ ձեռք բերելով մեծ քանակությանք բանբակ և առաջին անհրաժեշտության այլ ապրանքներ:

Այսպես, 1923 թ. դեկտեմբերի 9-ին Յայառի առևտորային բաժնի վարիչը գրություն է ուղարկում ՇՍԽՀ մաքսային վարչություն՝ խնդրելով թույլատրել Շարուրի մաքսակետի միջոցով Նախիջևանից արտահանել 1.000 փութ բանբակ և 1.000 փութ ծեր¹⁹:

Առաջին հայացքից թվում է, թե Նախիջևանի բաժանմունքում ամեն բան կարգին էր, և Յայառի վարչությունը գոհ էր ղեկավարության աշխատանքից: Սակայն դա խարուսիկ էր: Ենշտ է, մեր ձեռքի տակ չկան վարչության կողմից Նախիջևանի բաժանմունքի գործունեությունից դժգոհության ուղղակի փաստեր, սակայն 1924 թ. նոյեմբերի սկզբին վարչության ընդունած որոշումները և հետագա գործողությունները անուղղակի վկայում են դրա մասին:

Այսպես, 1924 թ. նոյեմբերի 5-ին Յայառի վարչության № 8 հրամանով Յայառի Նախիջևանի բաժանմունքի ղեկավարության կազմում տեղի է ունենում փոփոխություն, և հսահակ Բեկմազարյանը նշանակվում է այդ բաժանմունքի ղեկավար²⁰:

Նոյեմբերի 31-ին տեղի է ունենում Յայառի Նախիջևանի բաժանմունքի ընդիանութ ժողովը, որին ներկա են լինում բաժանմունքի Մելիքի մասնաճյուղի ղեկավար Օգանեզովը, Շարուրի մասնաճյուղի ղեկավար Դալաչյանը, Դարալազյագի²¹ մասնաճյուղի ղեկավար Օգանեզովը, Զանգեզուրի լիազոր Քերունցը և ուրիշներ: Վարչությունը ներկայացնում է Մելքոնյանը,

¹⁷ Տե՛ս նույն տեղը, գ. 42, թ. 7:

¹⁸ Տե՛ս նույն տեղը, թ. 6:

¹⁹ Տե՛ս նույն տեղը, գ. 33, թ. 19:

²⁰ Տե՛ս նույն տեղը, գ. 214, թ. 23:

²¹ Ներկայական կայքը:

որը բացում է ժողովը: Նա նշում է, որ Հայաստիկ կողմից Հայաստան է ներկրվել մոտ 600.000 փութ հացահատիկ, և ընթացիկ տարում նախատեսվում է այդ թիվը հասցնել 2.000.000 փութի: Մելքոնյանը հայտնում է նաև, որ վարչությունը կազմել է համապատասխան հրահանգներ, որոնց պետք է հետևեն բոլոր հաշվետարները:

Նրանից հետո ելույթ են ունենում տարբեր բաժանմունքների ներկայացուցիչներ, որոնցից Մեղրիի ներկայացուցիչ Օգանեզովը Հայաստիկ վարչության ուշադրությունն է հրավիրում այն փաստին, որ տեղերում գործկոմները Հայաստիկ դիտում են որպես վաշխառուական հիմնարկություն և ամեն կերպ խոչընդոտում են նրա աշխատանքը: Շարուրի ներկայացուցիչ Ղալաջյանը նշում է, որ ապրանքների պակասությունը ազդում է ընդհանուր շրջանառության վրա: Բաժնի կապը վարչության հետ շատ վատ է, և հաճախ կարևոր փաստաթրերը հասցեատիրոջն են հասնում ժամկետից 4-5 օր հետո միայն: Դարձագյազի ներկայացուցիչ Օգանեզովը խնդրում է բաժանմունքները ժամանակին ապահովել սեղոնային ապրանքներով: Նախիջևանի մասնաճյուղից Սակույանը բողոքում է, որ կոռպերատիվները չեն ցանկանում գործ ունենալ Հայաստիկ հետ՝ պատճառաբանելով, որ Հայաստիկ ապրանքները շատ թանկ են:

Ժողովը խնդրում է վարչությանը՝ իրենց ապրանքներ տրամադրել ավելի ցածր գներով, քան վաճառվում է կոռպերատիվներին²²:

Նախիջևանի բաժանմունքի վարչի նշանակվելուց գործե երեք ամիս անց՝ 1925 թ. փետրվարի 24-ին, Բեկնազարյանը հրապարակում է կարգապահական կանոնները բաժանմունքի բոլոր աշխատակիցների համար²³: Այս քայլերը ցույց են տալիս, որ բաժանմունքում բարձիթողի վիճակ էր, և Բեկնազարյանը ստիպված էր նաման քայլերի դիմել՝ վիճակը շտկելու և բաժանմունքի աշխատանքները բնականոն հունի մեջ դնելու համար: Յարկ է նշել, որ Բեկնազարյանի կողմից հրականացվող քայլերը արժանանում էին Հայաստիկ դեկավարության աջակցությանը:

Սեպտեմբերի 24-ին Հայաստիկ վարչությունը գրություն է ուղարկում Նախիջևանի բաժանմունք և խնդրում հայտնել աշխատակիցների մասին, թե ինչ ընդունակությունների տեր են և այլը²⁴:

Բեկնազարյանի նշանակումից հետո Նախիջևանի բաժանմունքի ղեկավարի գործունեության շրջանակները ընդլայնվում են: Եթե մինչ այդ ղեկավարի հիմնական գործառույթը Շարուր-Նախիջևանում բանբակի և հացահատիկի ձեռքբերումն էր ու փոխադրումը Հայաստան, ապա Հայաստիկ վարչությունը որոշում է Բեկնազարյանի գործառույթների մեջ մտցնել նաև Պարսկաստանի առանձին շրջաններից հացահատիկի ձեռքբերումը:

1925 թ. հունվարի 2-ին Վարչությունը Բեկնազարյանին վկայական է տալիս առ այն, որ նա գործուղում է Պարսկաստանի Մակուի խանություն՝ հացամբերի գնումներ կատարելու համար²⁵:

Նույն օրը նմանատիա վկայական տրվում է նաև Հայաստիկ վարչության աշխատակից Բահմուլ Կենգերլիմսկուն: Ըստ այդմ՝ Վարչությունը գրու-

²² Տես նույն տեղը, գ. 70, թ. 1-2:

²³ Տես նույն տեղը, գ. 214, թ. 62:

²⁴ Տես նույն տեղը, գ. 214, թ. 120:

²⁵ Տես նույն տեղը, գ. 224, թ. 7:

թյուն է ուղարկում ներքգործողկոմ և հայտնում, որ իսահակ Բեկնազարյանին և Բահմուլ Կենգերլինսկուն անհրաժեշտ է անցաթուղթ Շահբախը կայարանի վրայով Պարսկաստան անցնելու և Սակուի խանության սահմաններում հացամթերքի գնումներ կատարելու համար:

Նախիջևանից բացի, Յայառը բաժանմունք ուներ նաև Աղրբեջանի մայրաքաղաք Բաքվում, որը, սակայն, բացվել էր Շարուրի գրասենյակից ուշ՝ 1923 թ. սեպտեմբերին: Պատճառը կարող էր լինել այն, որ Յայառի վարչությունը հետազոտում էր ադրբեջանական շուկան, և քանի որ Նախիջևանի բաժանմունքը միայնակ չէր կարող առևտրական գործառույթներ իրականացնել Աղրբեջանի ողջ տարածքում, Յայառի վարչության կողմից ընդունվեց որոշում բաժանմունք ունենալ նաև Բաքվում:

1923 թ. սեպտեմբերի 24-ին Յայառի վարչությունը Մոլորադ Ղազարյանին նշանակում է Բաքվում Յայառի ներկայացուցիչ: Ղազարյանին տրված լիազորագրի համաձայն՝ նա իրավունք էր ստանում ստորագրելու պայմանագրեր, համաձայնագրեր, գործադրներ իրականացնելու շարժական և անշարժ գույքի գորավադրմամբ, գումար ստանալու բանկից, ներկայացնելու Յայառը վարչական և դատական հիմնարկություններում և այլ²⁶: Յաջորդ օրը՝ սեպտեմբերի 25-ին, Ղազարյանը հեռագրում է Բաքվում ՂՄԽ լիազոր ներկայացուցչությանն այն մասին, որ ինքը նշանակվել է Բաքվում Յայառի բաժանմունքի ղեկավար²⁷:

Յայառի Բաքվի բաժանմունքը աչքի էր ընկնում ակտիվությամբ և արդյունավետ գործունեությամբ: Բաժանմունքի ղեկավարությունը բանակցություններ էր վարում Բաքվում գտնվող բազմաթիվ ձեռնարկությունների և կազմակերպությունների ներկայացուցիչների հետ՝ փոխշահավետ համագործակցություն հաստատելով նրանց և Յայառի միջև:

1923 թ. ղեկտեմբերի 24-ին Ղազարյանի և Մետալլոսինդիկատի Անդրկովկասի բաժանմունքի ղեկավար Իոաննիսյանի միջև կնքվում է պայմանագիր, համաձայն որի՝ Մետալլոսինդիկատը Յայառին էր տրամադրում իր գործարանների կողմից արտադրվող ապրանքների մենաշնորհային վաճառքը Խորհրդային Յայաստանի ողջ տարածքում: Պայմանագիրը ստորագրվում էր մեկ տարի ժամկետով: Մետալլոսինդիկատը պարտավորվում էր որպես ապրանքաշրջանառության ֆոնդ Յայառին տրամադրել 20.000 ռուբլուց ոչ պակաս արժողությամբ ապրանքներ և այդ ֆոնդն անընդհատ համալրել նոր ապրանքներով: Յայառը ապրանքները Մետալլոսինդիկատի կողմից որոշված գներից էժան վաճառելու իրավունք չուներ, բացի դրանից՝ ապառիկ կարգով վաճառված ապրանքների համար ողջ պատասխանատվությունն ընկնում էր Յայառի վրա: Վերջինս պարտավորվում էր ամեն ամիս հաշվետվություն ներկայացնել իր կատարած գործունեության մասին²⁸:

1923 թ. ղեկտեմբերին Յայառը բաժանմունք է բացում նաև Զանգեզուրում, ինչը վկայում է այն մասին, որ այն ընդլայնում էր իր գործունեության աշխարհագրությունը: Նոր բաժանմունքի նկատմամբ վերահսկողու-

²⁶ Տե՛ս նույն տեղը, գ. 107, թ. 3:

²⁷ Տե՛ս նույն տեղը, թ. 1:

²⁸ Տե՛ս նույն տեղը, թ. 88-89:

թյուն պետք է իրականացներ Բաքվի բաժանմունքը, որը նաև պետք է նրան օգներ տարբեր հարցերում: Դեկտեմբերի 28-ին Յայառի կառավարչ-տնօրենը հեռագրում է Բաքվի բաժանմունք՝ հայտնելով, որ իրենց կողմից Զանգեզուրում բացվել է բաժանմունք, և դեկավար է նշանակվել Նիկոլայ Դորունցը: Դեռագրում խնդրվում է նշված բաժանմունքին տրամադրել 3.000 ռուբլի արժողությանը տարբեր ապրանքներ²⁹:

1924 թ. փետրվարի 23-ին Ղազարյանը գրություն է ուղարկում Յայառի վարչությանը այն մասին, որ շաքարի տրեստի Անդրկովկասի բաժանմունքների դեկավարությունը համաձայն է, որ Յայառը լինի իր ներկայացուցիչը Խորհրդային Յայաստանում, և խնդրում էր բոլոր հարցերը քննարկել Թիֆլիսում գտնվող իրենց ներկայացուցչության հետ: Բացի այդ, հաղորդվում էր, որ Բաքվի գրասենյակը Զանգեզուրի համար 30-օրյա ժամկետով ապարհի կարգով վերցրել է 150 փութ շաքար, հույս հայտնելով, որ կարելի է մտածել նաև ավելի մեծ ծավալների մասին³⁰:

Ցավոր, մեզ չհաջողվեց պարզել, թե ինչ ընթացք է ստացել այս փաստաթուղթը:

1924 թ. մարտի 1-ին Ղազարյանը մեկ այլ գրություն է ուղարկում Յայառի վարչությանը և հայտնում, որ Բաքվի Լենինի անվան տեքստիլ ֆաբրիկայի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել անսական 150.000 արշին մանուֆակտուրա ձեռք բերելու ուղղությամբ: Վճարումը պետք է իրականացվեր կանխիկ կամ բանքակով: Քանի որ այդ մանուֆակտուրան նախատեսված էր Խորհրդային Յայաստանի համար, անհրաժեշտ էր, որ Բաքվի բաժանմունքը Յայաստանի շրջաններում ունենար (Յայառի բաժանմունքներում) այդ ապրանքի տեղաբաշխման կոնկրետ ծրագիր, ինչպես նաև պետք է երաշխավորեր, որ ապրանքների դիմաց Յայաստանը պարբերաբար վճարելու էր: Ապրանքը Բաքվից ուղարկվելու էր միայն գումարը կամ բանքակը ստանալուց հետո³¹:

Այս հեռագրին Յայառի վարչության տված պատասխանը ևս մեզ չհաջողվեց հայտնաբերել:

Առանձին դեպքերում ՀՍԽՀ ժողովրդական տնտեսության բարձրագույն խորհուրդը Բաքվի բաժանմունքին հարցում էր անում այս կամ այն ապրանքի գինը տեղում ճշտելու, այս կամ այն ապրանքը Բաքվում իրացնելու հնարավորությունների մասին:

Մարտի 19-ին ՀՍԽՀ ժողովրդական տնտեսության բարձրագույն խորհրդին ուղարկած գրությունում Ղազարյանը պատասխանում է նիշ շաբթ ապրանքների գծով խորհրդի արած հարցմանը: Մասնավորապես նշում է, որ Բաքվում տվյալ պահին կաղնու կեղև հնարավոր չէ ձեռք բերել: Այն կարելի է գնել Խաչմազում կամ Լենքորանում: Մոտ մեկ ամիս առաջ, Ղազարյանի հաղորդմամբ, այդ ապրանքի գինը 1 կեղևի համար կազմել է 75 կոպեկ: Այծի և ոչխարի մորթի ևս, ըստ Ղազարյանի, Բաքվում չկա, և դրանք կարելի է ձեռք բերել Անդրկասայան շրջանում: Հստակ գին գրյուրյուն չուներ, սակայն վաճառականները հաղորդում էին, որ ոչխարի մոր-

²⁹ Տե՛ս նույն տեղը, թ. 155:

³⁰ Տե՛ս նույն տեղը, թ. 130:

³¹ Տե՛ս նույն տեղը, թ. 177:

թին արժեքը 70-80 կոպեկ, իսկ այժմ մորթին՝ 1ռ. 30 կոպեկ: Այս կապակցությամբ բաժանմունքն արդեն հարցում էր կատարել Անդրկասպայան շրջան և Պարսկաստան³²:

Հայառի Բաքվի բաժանմունքն առևտրատնտեսական կապեր հաստատելու նպատակով ակտիվ աշխատանք էր իրականացնում նաև Լեռնային Ղարաբաղի գործկոմի հետ:

1924 թ. մայիսի 29-ին Լեռնային Ղարաբաղի գործկոմի ղեկավար Կարակողովը հեռագրում է Բաքվում Հայառի բաժանմունք և առաջարկում Ղարաբաղում համատեղ մթերել մետաքս և վաճառել այն հետևյալ պայմաններով.

1. Ղարաբաղի գործկոմն ընթացիկ տարում ձեռք էր բերում մոտ 3000 փութ շերամի կոկոն և իրենց հաշվին Ղարաբաղում հիմնված գործարաններում դրանից ստանում մետաքս:

2. Մթերված մետաքսը հանձնվում էր Բաքվի բաժանմունք, որն իրացնում էր այն երկու կողմերի համար ձեռնտու գնով:

3. Մետաքսն իրացնելուց հետո՝ բոլոր ծախսերը ծածկելուն պես, ստացված եկամուտը բաժանվում էր հավասարապես:

4. Գործկոմը Բաքվի բաժանմունքի հետ միասին մինչև հունիսի 15-ը պետք է ներդներ 10.000 ռ.:

5. Այս գործարքի համար ամեն ամիս պետք է իրականացվեր խիստ հաշվապահություն, և տրվեր հաշվետվություն³³:

Նույն օրը Կարակողովը երկրորդ հեռագիրն է ուղարկում Բաքվի բաժանմունք և առաջարկում Ղարաբաղում համատեղ մթերել և հետագայում իրացնել 96%-անոց մրգային սպիրտ՝ հետևյալ պայմաններով.

1. Գործկոմը Ղարաբաղից գնում էր մրգի օղի և դրանից ստանում էր սպիրտ:

2. Ստացված սպիրտը հանձնվում էր Բաքվի բաժանմունքին, որը իրացնում էր այն երկու կողմերի համար ձեռնտու գնով:

3. Սպիրտն իրացնելուց հետո՝ բոլոր ծախսերը ծածկելուն պես, ստացված եկամուտը բաժանվում էր հավասարապես:

4. Գործկոմը Բաքվի բաժանմունքի հետ միասին մինչև հունիսի 15-ը պետք է ներդներ 10.000 ռ.:

5. Այս գործարքի համար ամեն ամիս պետք է իրականացվեր խիստ հաշվապահություն, և տրվեր հաշվետվություն³⁴:

Մինչյանը հեռագործ հայտնում է Կարակողովին, որ համաձայն են հենց ստացման օրվանից առաջարկը ուժի մեջ համարելու³⁵:

Մայիսի 31-ին Ղազարյանը և Մինչյանը հեռագրով հայտնում են Հայառի վարչությանը, որ իրենց կողմից Լեռնային Ղարաբաղի գործկոմի հետ պայմանավորվածություն է ձեռք բերվել շերամի կոկոնի և սպիրտի համատեղ մթերման ու իրացման վերաբերյալ:³⁶

Հայառի վարչությունը աշխատանքներ էր տանում նաև Հայաստա-

³² Տե՛ս նույն տեղը, թ. 131:

³³ Տե՛ս նույն տեղը, թ. 325:

³⁴ Տե՛ս նույն տեղը, թ. 326:

³⁵ Տե՛ս նույն տեղը, թ. 327:

³⁶ Տե՛ս նույն տեղը, թ. 324:

նում արտադրվող մթերքները Բաքվի բաժանմունքի միջոցով այնտեղ ի-
րացնելու ուղղությամբ:

1924 թ. հունիսի 6-ին Հայարի տեսուչ-կարգադրիչ Մելքումյանը հե-
ռագրում է Բաքվի բաժանմունքին և հայտնում, որ վարչությունը կարող է
Բաքու առաքել մեծ քանակությամբ հավկիթ: Հեռագրում խնդրվում է
ստույգ տեղեկություն տալ, թե շաբաթական որքան ծու է հնարավոր ի-
րացնել Բաքվում³⁷:

Հայարը սկսում է Բաքու հավկիթ առաքել, սակայն դա կարճ ժամա-
նակ է տևում:

Հուլիսի 2-ին Ղազարյանը հեռագրում է Հայարի Լենինականի բաժան-
մունքին և հայտնում, որ նրանց ուղարկած հավկիթները վատորակ են:
Խմբաքանակի 15-18%-ը եղել է նեխած և վատ փաթեթավորված: Բացի
դրանից, շոգ եղանակի պայմաններում բերը Բաքու է հասել միայն 18 օր
հետո: Այս ամենը հաշվի առնելով՝ Բաքվի բաժանմունքը խնդրում է այլս
իրենց հավկիթ չուղարկել³⁸.

Բաքվում Հայարի բաժանմունքը մեծ աշխատանք էր տանում տեղում
հայկական գործարանների համար պատվերներ ստանալու և այդ գործա-
րանների արտադրանքը Աղրբեջանի մայրաքաղաքում իրացնելու ուղղու-
թյամբ:

Հուլիսի 14-ին Ղազարյանը հեռագիր է ուղարկում Ալավերդու գործա-
րանների վարչությանը և հայտնում, որ հուլիսի 13-ին իրենք ծծնբաքարի
վերաբերյալ բանակցություններ են վարել Ազնավորի տեխնիկական մատա-
կարարման բաժնի հետ և պարզել, որ տվյալ պահին ծծնբաքարը Ազնավորի
համար մեծ հետաքրքրություն է ներկայացնում: Տեխնիկական մատակա-
րարման բաժինը խնդրել է իրենց ներկայացնել կոնկրետ և սպառիչ առա-
ջարկ, որը մոտակա 2-3 շաբաթվա ընթացքում՝ ուրիշ գործարաններից ևս
առաջարկների ստացումից հետո, քննարկման առարկա էր դառնալու, ո-
րից հետո, եթե հայկական կողմի պայմանները (հատկապես՝ որակը և գի-
նը) ընդունելի լինեն, հնարավոր կլինի կնքել պայմանագիր: Ղազարյանը
բաժանմունքի անունից, ի շահ գործարանի, խնդրում էր իրենց ուղարկել
կոնկրետ առաջարկ՝ հաշվի առնելով խնդրի բոլոր հանգամանքները, և այդ
դեպքում բաժանմունքը կարող էր բանակցություններ վարել և համաձայ-
նության գալ տեխնիկական մատակարարման բաժնի հետ: Դրա համար
գործարանի տնօրենությանը խնդրվում էր բաժանմունքին ներկայացնել ի-
րենց ցանկությունները և վճարման պայմանները: Դրանով բաժանմունքին
հնարավորություն էր տրվում օգտագործելու վճարման այլ տարբերակներ
ևս՝ նավթամթերքով կամ Հայաստանի տեքստիլ գործարանների համար
Ազնավորի գործարանների պատրաստած չուգունե կանգնակներ տալով³⁹:

Թե ինչպիսին եղավ Ալավերդու գործարանների վարչության պա-
տասխանը Բաքվի բաժանմունքի առաջարկին, արխիվային փաստաթղթե-
րի ուսումնասիրության ժամանակ պարզել չհաջողվեց:

Աղրբեջանական նավթային սինդիկատի հետ հարաբերություններում

³⁷ Տե՛ս նույն տեղը, թ. 334:

³⁸ Տե՛ս նույն տեղը, թ. 401:

³⁹ Տե՛ս նույն տեղը, թ. 426:

որոշակի սառնություն է սկսում նկատվել 1926 թ. աշնանից: Նավթամթերք-ների առաքումը Բաքվից տեղի էր ունենում ընդհատումներով, ինչը հարուցում է հայկական կողմի, մասնավորապես Յայկոոպի դժգոհությունը, որը Յայաստան նավթի հիմնական ներկրողներից էր:

1926 թ. սեպտեմբերի 22-ին Յայկոոպի Վարչության անդամ Ստանբուրյանը հեռագրում է ՅԱԽՀ-ում Անդրկովկասի ներքին առևտություն ժողկումատի լիազոր ներկայացուցչություն և հայտնում, որ, համաձայն Բաքվում Յայկոոպի ներկայացուցչի տվյալների, նավթային սինդիկատը կտրուկ կրծատել է հոկտեմբեր և նոյեմբեր ամիսների համար նախատեսված նավթի բացրողումը, որը լուրջ խնդիրներ կառաջացնի ՅԱԽՀ-ում բնակչությանը նավթի մատակարարման գործում, և այդ պարագայում Յայկոոպը պատասխանատվություն չի կրում բնակչության կարիքների ապահովման հարցում⁴⁰: Յաջորդ իսկ օրը՝ սեպտեմբերի 23-ին, ՅԱԽՀ-ում Անդրկովկասի ներքին առևտություն ժողկումատի լիազոր ներկայացուցիչ Պիրգույսանը հեռագրում է Անդրկովկասի ներքին առևտություն և հայտնում, որ հոկտեմբեր, նոյեմբեր ամիսների նավթի բնակչության պահանջարկը 65.000 փութ է⁴¹:

Նավթի առաքման խնդիրներից բացի՝ Յայկոոպի առջև ծագում են ավելի լուրջ խնդիրներ, որոնցում իրենց մեղքի բաժինն ունեին նաև վրացիները: Այնպիսի տպավորություն է ստացվում, որ նրանք դիտմանք էին նման խնդիրներ ստեղծում, որպեսզի Յայկոոպին դուրս մղեն շուկայից: 1926 թ. նոյեմբերի 25-ին Յայկոոպի Թիֆլիսի ներկայացուցչությունը դիմում է Անդրկովկասի ֆինանսների ժողկումատի հարկային վարչությանը և հայտնում, որ Բաքվից Գարդաբանի կայարանով նավթամուղով Յայաստան առաքվող նավթի ողջ խմբաքանակի 0,7%-ի դիմաց ադրբեջանական կողմը Յայկոոպից գանձել է նավթի 2%-ը: Նավթամուղի գործարկման նոր կարգի համաձայն՝ տարբերությունը որոշ ժամանակ անց պետք է վերադարձվեր Յայկոոպին, սակայն անսպասելիորեն որոշվել է տարբերությունը տալ Նավթային սինդիկատին, որը հայկական կողմը անտրամաբանական է համարում: «Նշված պայմաններում մեր կողմից նավթի վաճառքը չի կարող ձեռնոտու լինել, քանի որ մենք լրացուցիչ 1,3% վնաս ենք կրում, քանի որ տարեկան Գարդաբանի կայարանով Յայաստան է ուղարկվում 300.000 փութ նավթ»,- նշված է դիմումի վերջում:

Այս կապակցությամբ Անդրկովկասի ներքին առևտություն ժողկումատին է դիմում նաև Պիրգույսանը՝ խնդիրելով պաշտպանել «Յայկոոպի» շահերը⁴²:

1927 թ. սկսած՝ նոր խնդիրներ են առաջանում հայկական և ադրբեջանական ընկերությունների միջև: Յունվարի 3-ին Լենքաղավգործկոմի «Առարդի»⁴³ կառավարիչ Ստեփանյանը գրություն է ուղարկում Ներքառժողկումատին՝ դժգոհելով, որ Նեֆքեսինդիկատը հայտնել է, որ այլևս Լենինականի օճախի գործարանին չի կարող օճախի արտադրության համար անհրաժեշտ հումք բաց թողնել, քանի որ Յայկոոպի հետ պայմանավորվածության համաձայն՝ նման հումք ՅԱԽՀ տարածքում կարող է բաշխվել միայն Յայկոոպի միջոցով, իսկ վերջինս հրաժարվել է դա տրամադրելուց:

⁴⁰ Տե՛ս նույն տեղը, §. 124, գ. 1, գ. 64, թ. 18:

⁴¹ Տե՛ս նույն տեղը, թ. 20:

⁴² Տե՛ս նույն տեղը, թ. 23:

⁴³ Լենքաղավգործկոմի առևտություն և արդյունաբերության վարչություն:

Գրության վերջում նշվում է, որ գործարանը 1927 թ. համար ծրագրել է արտադրել 30-40 հազար փութ օճառ, և առանց հումքի դա հնարավոր չէ իրականացնել: Ստեփանյանը Ներքաժողովնատից խնդրում է միջնորդել Նեֆքեսինդիկատի դեկավարությանը խնդրի կարգավորման համար⁴⁴:

Այս խնդրը ծագել էր դեռևս 1926 թ. դեկտեմբերի կեսերից: Սկզբում Լենքաղավգործկոմի «Առարդը» փորձում էր հարցը կարգավորել Հայկոպահի հետ, սակայն դեկտեմբերի 18-ին Հայկոպահի վարչության դեկավար Ֆուլյանը պաշտոնապես հայտնել էր «Առարդին», որ իրենց կարիքների համար ամսական անհրաժեշտ է երկու վագոն հումք, սակայն Հայկոպար ստանում է միայն մեկ վագոն և «Առարդին» ոչինչ տրամադրել չի կարող⁴⁵:

Այս գրությամբ Հայկոպահի դեկավարությունը կարծես հուշում է «Առարդին», որ իրենց մեջ մեղավոր չփնտրեն և փորձեն հարցը կարգավորել Անդրկովկասի դեկավարության հետ: «Առարդը» դիմում է ԽՍՀՄ Նեֆքեսինդիկատին և դեկտեմբերի 19-ին ստանում է պատասխան այդ գերատեսչության Մերձավորարևելյան շրջանների վարչությունից: Պատասխանում նշվում է, որ իրենց կողմից արվել է համապատասխան կարգադրությունը դեկտեմբերի 20-31-ն ընկած ժամանակահատվածում «Առարդին» տրամադրել 1 վագոն հումք: Սակայն այդ ապրանքի նկատմամբ պահանջարկի ավելացման պատճառով դրա բաշխման գործին միջամտել է Ադրբեյջանական ԽՍՀ-ում Անդրֆեդերացիայի առժողովնատի լիազոր վարչությունը, որը դեկտեմբերի 6-ին ընդունել է որոշում, համաձայն որի՝ հետագայում Ադրբայչանը Հայաստանին և Վրաստանին այդ հումքը պետք է մատակարարի բացարձակապես Հայկոպահի և Վրացպետկոռափի միջոցով: Ըստ այդմ՝ Եզրակացվում է, որ «Մերձավորարևելյան շրջանների վարչությունը այսուհետև հնարավորություն չունի Զեզ առաքել հումք»⁴⁶:

Ինչպես երևում է, հարցը բավականին կարևորություն էր ներկայացնում հայկական կողմի համար, հակառակ պարագայում գործին չէր միջամտի ԽՍՀ-ում Անդրկովկասի ներքին առևտի ժողովնատի լիազոր ներկայացուցիչ Պիրգույնանը: Խա 1927 թ. հունվարի 7-ին հեռագիր է ուղարկում Ադրբեյջանական ԽՍՀ-ում Անդրֆեդերացիայի առժողովնատի լիազոր վարչության նախագահ Բաղիրովին: Հեռագրում նշվում է, որ Լենինականի օճառի գործարանը ծրագրել է 1927 թ. համար արտադրել 30-40 հազար փութ օճառ, ուստի պահեստավորել է անհրաժեշտ քանակությամբ հումք, բացառությամբ նավթօճառի⁴⁷: Բացի դրանից, Բաքվում գտնվող ԽՍՀՄ Նեֆքեսինդիկատի Մերձավորարևելյան շրջանների վարչությունը հրաժարվում է նավթօճառ մատակարարել Լենինականի գործարանին՝ նշելով, որ նոր կարգի համաձայն՝ Ադրբայչանը Հայաստան նավթօճառ պետք է առաքի մինհայն Հայկոռափի միջոցով, իսկ մյուս կողմից՝ անսական Հայկոռափին հատկացվում է ընդամենը 1 վագոն, որը շատ քիչ է երևանի և Լենինականի գործարանների համար: Հեռագրի վերջում Պիրգույնը խնդրում է կամ անսական Լենինական առաքել 1 վագոն նավթօճառ, կամ էլ ավելացնել Հայկոռափին առաքվող հումքի քանակը⁴⁸:

⁴⁴ Տես նույն տեղը, թ. 25:

⁴⁵ Տես նույն տեղը, թ. 27:

⁴⁶ Նույն տեղում, թ. 26:

⁴⁷ Արխիվային փաստաթղթում ռուսերեն գրված է մալոնաֆ:

⁴⁸ Տես նույն տեղը, թ. 28:

Կարծես թե նախօրոք տեղյակ լինելով Պիրգույանի գրության մասին՝ Ադրնավթառը գրությունից 2 օր առաջ՝ հունվարի 5-ին, իր հերթին համապատասխան նամակ է ուղարկում Անդրկովկասյան երկարուղիների վարչությանը։ Սակայն հետաքրքրականն այն է, որ նամակում Ադրնավթառը պահանջում է ավելացնել վագոնների թիվը՝ հղում անելով այն հանգամանքին, որ Վրացաբետկոռափի պահանջարկն ավելացել է, իսկ Հայկոռափի պահանջների մասին չկա ոչ մի խոսք⁴⁹։ Տեսնելով, որ տեղաշարժ չկա, Հայկոռափի վարչության ղեկավար Ֆոյյանը հունվարի 13-ին հեռագրում է Անդրներքառժողկոմատի Հայաստանի լիազոր վարչությանը՝ խնդրելով միջնորդել համապատասխան մարմինների առաջ՝ ավելացնելու Ադրնավթառին հատկացված վագոնների քանակը, որպեսզի Հայաստան ներմուծվող նավամթերքների ծրագրի իրականացումը վտանգի տակ չլինի⁵⁰։ Հունվարի 21-ին նմանատիպ հեռագիր Անդրներքառժողկոմատին ուղարկում է նաև Պիրգույանը՝ խնդրելով արդյունքների մասին տեղեկացնել⁵¹։ Մի քանի օր հետո՝ հունվարի 25-ին, Անդրներքառժողոմատի Ադրբեջանական ԽՍՀ-ի լիազոր վարչությունը հեռագրում է Պիրգույանին և հայտնում, որ իրենք դիմել են ԽՍՀՄ Նեֆքեսինդիկատի վարչության նախագահ Անդրբերովսկում՝ խնդրելով ավելացնել նավթօճառի քաշխման չափաբաժինը Անդրկովկասի հանրապետությունների համար⁵²։

Չնայած գործադրած ջանքերին հայկական կողմը հաջողության չի հասնում բեռնափոխադրումների ծավալի ավելացման հարցում։ 1927 թ. փետրվարի 22-ին Անդրներքառժողկոմատի վարչության նախագահ Նովիկովը հեռագրում է Պիրգույանին և հայտնում, որ հարցը ուսումնասիրվել է, և պարզել են, որ Անդրկովկասյան երկարուղիները տեխնիկապես չեն կարող օրական սահմանված քանակից շատ փոխադրում իրականացնել⁵³։

Արխիվային փաստաթերի ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ օրի նոր խոչընդոտներ էին առաջանում Հայաստան նավթամթերքների առաքման հարցում։ Ապրիլ-մայիս ամիսներին բեռների փոխադրում ժամանակ առաջանում են լրացուցիչ ծախսեր, որոնք հայկական կողմը փորձում է վճարել առաքող կողմի հաշվին։ Ապրիլի 20-ին հայկական կողմը դիմում է Անդրներքառժողկոմատի ադրբեջանական ներկայացուցչություն և հայտնում, որ բեռների փոխադրումների ժամանակ առաջացած լրացուցիչ ծախսերը կապ չունեն նավթօճառի գննան հետ, սակայն կարող են բարձրացնել ինքնարժեքը։ Դիմումի մեջ խնդրվում է կամ այդ ծախսերը փոխանցել Ադրնավթառի հաշվին, կամ էլ դրանք հասցնել նվազագույնի⁵⁴։ Սրան ադրբեջանական կողմը պատասխանում է մայիսի 7-ին և հայտնում, որ Ադրնավթառը նավթամթերքները վաճառում է ԽՍՀՄ Նեֆքեսինդիկատի գներով, ուստի չի կարող իր վրա նման ծախսեր վերցնել, և հետևաբար նավթամթերքների առաջումը պետք է իրականացվի ընդունող կողմի հաշվին⁵⁵։

⁴⁹ Տես նույն տեղը, թ. 35:

⁵⁰ Տես նույն տեղը, թ. 36:

⁵¹ Տես նույն տեղը, թ. 37:

⁵² Տես նույն տեղը, թ. 29:

⁵³ Տես նույն տեղը, թ. 38:

⁵⁴ Տես նույն տեղը, թ. 53:

⁵⁵ Տես նույն տեղը, թ. 55:

Ամփոփելով ցանկանում ենք նշել, որ Խորհրդային Ադրբեջանում ՀՍԽՀ մարմինների և հատկապես Հայասի իրականացրած գործողությունները հիմնականում պսակվեցին հաջողությամբ: Հայասի Շարուրի ներկայացուցչության հիմնական խնդիրն էր Նախիջևանում ձեռք բերել բանբակ և կերակրի աղ, ինչը հետագայում փոխանակվում էր խորհրդային այլ հանրապետություններում՝ Երկիր ներմուծելով հացահատիկ և առաջին անհրաժեշտության ապրանքներ: Ի տարրերություն Շարուրի բաժանմունքի՝ Բարզի բաժանմունքը հիմնականում գրաղված էր Ադրբեջանի մայրաքաղաքում հայկական ձեռնարկությունների համար պայմանագրեր կնքելով և տեղում հայկական արտադրության արդյունաբերական և գյուղատնտեսական ապրանքներն իրացնելով: 1926 թ. սկսած՝ հայկական կողմը Բարզի նավթային սինդիկատի հետ ուղղակի հարաբերություններ հաստատելու քայլեր ձեռնարկեց, ինչը հնարավորություն կտար հայկական ձեռնարկություններին մատչելի գնով ստանալ նավք և նավթամթերք:

ГРИГОР БАЛАСАНЯН – Из истории армяно-азербайджанских торгово-экономических связей (1923–1927 гг.). – Власти АрмССР ещё в 1921–1922 гг. накопили большой опыт работы с государственными и кооперативными предприятиями Азербайджана, что во многом способствовало развитию армянской экономики. Двусторонние отношения обеспечили Армению бесперебойными поставками нефти, взамен же в соседнюю республику вывозилась руда и иные товары. После образования СССР в Армении развернулась энергичная работа по улучшению социально-экономического положения. Важная роль в этой работе принадлежала внешней торговле, в частности с Азербайджаном. Торговые отношения с ним условно делятся на два периода. В первый из них (1923–1925 гг.) армянская сторона предпринимала шаги по развитию сельского хозяйства, и основу товарообмена составлял хлопок. А в 1925–1927 гг. торговля с азербайджанцами ставила целью промышленное развитие, соответственно главным пунктом товарообмена были нефть и нефтепродукты.

GRIGOR BALASANYAN – From the History of Armenian-Azerbaijani Trade-Economic Connections (1923–1927). – The authorities of SSRA had a big working experience with various state and cooperative enterprises which had been accumulated already in 1921–1922 and those relations greatly promoted the economic development of Soviet Armenia. This cooperation provided the unobstructed delivery of oil from Azerbaijan to Armenia in lieu of ore and other goods exported from Armenia. Becoming part of the USSR, the authorities of Soviet Armenia didn't forget the rich experience of establishing foreign trade and economic ties well aware of the fact that the foreign trade could play an important role for the sake of that purpose. The relations can conditionally be divided into two parts. During the first half of 1923–1925, the Armenian side took steps for the development of agriculture and, besides, the cotton was accepted as the basis of exchange of commodities. In the second half of 1925–1927, the relations with the Azerbaijanis were aimed at the development of the country's industry, oil and oil-products were the main means of the exchange of commodities and trade.